

ՄԻ ՊԱՏՈՒՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Իհարկե, դա մի առօրյա դեպք էր, որին այն ժամանակ ոչ դու և ոչ էլ ես նշանակություն չենք տվել: Եվ գուցե հիմա էլ, անգամ իմ պատմելուց հետո, այդ բոլորը քեզ մի անկապ ու անառողջ զառանցանք թվա: Երբ ներս մտա, հասկացա, թե ինչ է կատարվում, և վերջապես սկսվեց մեր այս գրույցը, հանկարծակի հիշեցի այդ դեպքը: Հավատա, նախկինում դա երբեք չեմ մտաբերել, հենց հիմա, հենց այս պահին հիշեցի: Եվ միշտ համոզված եմ եղել, որ անթիվ ու անհամար դեպքերը, անգամ ամենաաննշանները, որոնք տեղի են ունենում, չեն կորչում անհետ ու անհետևանք: Նրանք խցկվում են ենթագիտակցության ոլորտները, որպեսզի մի օր, մի անհրաժեշտ պահի արթնանան ու վերհիշվեն: Եվ լուսանկարները պատռելով չէ, որ ազատվում են անցյալից: Եվ ոչ էլ լուսանկարներով են վերադարձնում անցյալը: Այնպես որ, լինի անցյալ, թե ներկա, դա մի կյանք է: Եվ քանի դեռ ողջ ես, կյանքը հառնելու է ամեն մի անսպասելի անկյունից ու ամեն մի անտեսանելի ճեղքից: Իզուր ես պատռել լուսանկարները: Սուտ է, լուսանկարները ոչ օգնում են, ոչ էլ խանգարում: Եվ հետո ինչու՞ ես շտապում: Չէ՞ որ ճանապարհից առաջ մի փոքր նստում են: Եվ բացի այդ, ես որոշել եմ պատմել այն դեպքը: Իհարկե, ինչպես ասացի, դա մի աննշան բան է, և ես բոլորովին չեմ մտածում, թե այն պատմելուց հետո ինչ-որ բան պիտի փոխվի: Դու հեռանում ես: Դա պարզ է: Թե ու՞մ հետ և ու՞ր, դա էլ հայտնի է ինձ: Ջարմանալու հարկ չկա: Վերջապես դա չէ կարևորը: Ես ուղղակի կանխագուժում եմ: Վերջին մի քանի շաբաթվա ընթացքում նկատում էի կատարվող փոփոխությունները: Բանն այն է, որ չէի ուզում հաշտվել, չէի ուզում հավատալ դրան: Ես ամեն ինչ թողեցի մայրաքաղաքում ու եկա այստեղ: Ես քեզ շատ էի սիրում: Հիմա էլ թերևս ոչինչ չի փոխվել...

Հա, այդ դեպքը... Պավելի մեքենայով Սևան էինք գնացել: Երեքով էինք: Ջուրը տաք էր: Դու ծաղկավոր լողազգեստ էիր հագել: Իսկապես, ես այն ժամանակ այնքան հիմար տեսք ունեի (մորուքի՞ցս էր, ի՞նչ էր), իսկ դու էլ այնքան լավն էիր, որ բոլորի մտքով կարող էր անցնել, թե դու անպայման դավաճանում ես ինձ: Չէ, միշտ չէ, որ կանայք դավաճանում են հիմար տղամարդկանց: Բայց... Մի տարի էլ չի անցել: Հիշու՞մ ես, այն ժամանակ ես այնքան էլ լավ չէի լողում և ամեն անգամ ջուրը մտնելիս քեզ միշտ խնդրում էի, իհարկե կատակով, որ ինձ հետևես և ժամանակին ետ կանչես: Որովհետև ես ետ չէի նայում և, իսկապես, հնարավոր էր ավից այնքան շատ հեռանայի, որ հետո չկարողանայի ետ գալ: Ու ես լողում էի, դանդաղ հեռանում

ափից՝ առանձնակի մի երանությամբ սպասելով քո կանչին: Ու երբ դու կանչում էիր ինձ, ու երբ ես շրջվում էի դեպի ափը ու ափին տեսնում էի քեզ, որքան էլ հոգնած լինեի, նոր ուժ էի ստանում ու սկսում էի լողալ դեպի ափը, դեպի քեզ: Ուզում էի վայրկյան առաջ հասնել քեզ ու հոգնած փլվել քո կողքին... Լավ, լավ, է՛լ չեմ շեղվի ու կպատմեմ այդ դեպքը: Այդ աննշան, բայց չարաբաստիկ դեպքը...

Այդ օրը, երբ մենք լճափին երեքով էինք, դու ջերմ գրույցի էիր բռնվել Պավելի հետ: Ես կարծեմ գիրք էի կարդում: Պավելը ինչ-որ ուրախ պատմություններ էր անում ու մերթընդմերթ՝ ականջիս տակ լսվում էր քո ծիծաղի զրնգոցը: Յետո ես վեր կացա ու դանդաղ գնացի դեպի ջուրը: Ջուրը մտնելուց առաջ, վերջին պահին շրջվեցի, նայեցի քեզ ու նորից կատակով զգուշացրի, որ՝ տես հա, չմոռանաս ինձ ետ կանչել: Դու առանց իմ կողմը նայելու, ուղղակի թեթևակի գլխով արեցիր ու ասացիր. «Լավ»: Քո պատասխանն ինձ շատ սառն ու անտարբեր թվաց: Մի պահ քարացած նայեցի քեզ: Դու կլանված նայում էիր Պավելին ու բնականաբար չտեսար ու չզգացիր այդ պահը: Յետո տրորեցի ափին գլորվող ալիքներն ու սուզվեցի ջրի մեջ: Թափ տվեցի թևերս ու մի բուժ ու անորոշ ատելությամբ լցված դեպի այդ արևոտ օրը՝ սկսեցի հեռանալ ափից: Լողում էի ու անհամբեր սպասում թե ուր որ է դու ինձ ետ կկանչես: Սպասում էի, թե ահա կլսեմ ինձ ափ կանչող քո ձայնը: Եվ երբ բավականին հեռացել էի ափից, և արդեն որոշ չափով սպառվել էին ուժերս, հանկարծ չգիտեմ ինչու, որոշեցի, որ ետ չեմ դառնալու, ետ չեմ դառնալու, մինչև չլսեմ քո կանչը: Չէ որ քեզ զգուշացրել էի, չէ որ դա մեր խաղն էր, ու ես արդեն վաղուց վարժվել էի այդ խաղին... Ինչևէ. լողում էի ու դանդաղ հեռանում ափից: Յեռանում էի, բայց չէի կորցնում հույսը: Ահա, ահա դու կսթափվես ու կտեսնես, որ շատ եմ հեռացել ափից: Դու վախեցած կկանչես ինձ ու ես կշրջվեմ: Կշրջվեմ ու ոգևորված քո կանչից՝ կլողամ դեպի ափ, դեպի քեզ: Բայց այդպես էլ դու ինձ չկանչեցիր: Այդպես էլ երբեք էլ չլսեցի ալիքների վրայով ինձ ափ կանչող քո ձայնն ու խեղդվեցի վերջնականապես...

Եվ այն ժամանակ, երբ ես զգացի, որ ուժերս իսկապես սպառվում են, ու ինձ պատել է մի անորոշ սարսափ, որոշեցի շրջվել դեպի ափը: Արևը ծածկվել էր ամպերով, և ալիքները ուժգնացել էին: Մի փոքր շրջան գծեցի ու տեսա լայն հովանոցը, որի տակ դուք նստած, երևի դեռ շարունակում էիք զրուցել: Ես սկսեցի տազնապած լողալ դեպի ափը: Ուժերս սպառվել էին, հազիվ էի շարժում թևերս, բայց շարունակում էի անմռունչ լողալ ու ծպտուն չէի հանում: Չէի ուզում օգնություն կանչել: Կհասնեմ, մտածում էի ես, մահն այսքան անհեթեթ չի լինում: Ու թե ինչ էր կատարվում այդ պահին լճի ալիքվող մակերևույթին, բացի ինձնից և թերևս նաև այն մի քանի ճայերից, որ անհանգիստ պտտվում էին իմ գլխավերևում, ոչ ոք չգիտեր: Եվ, երբ ոտքերս վերջապես կպան հատակի քարերին, դադարեցի լողալ, մի քանի լայն ու

ծանր քայլերով կտրեցի ջրի վերջին մետրերը ու հևալով, տաք ավազի վրայով ծնկաչոք հասա քեզ և ուժասպառ փռվեցի ոտքերիդ մոտ: Մի քանի րոպե անց, երբ շնչառությունս արդեն տեղն էր եկել, ես շրջվեցի դեպի քեզ: Կատարվածին անտեղյակ՝ ժպտալով ինձ էիր նայում: Ես ասացի, իհարկե, դարձյալ, կատակով, որ քեզ վրա հույս դնել չի կարելի, որ քո պատճառով քիչ մնաց խեղդվելի լճում: Դու մի լավ ծիծաղեցիր վրաս: Իսկ Պավելը քթի տակ ժպտում էր: Իհարկե, միայն հիմա, հենց այս պահին եմ հիշում ու հասկանում մանրամասները: Չէ՞ որ այն ժամանակ ոչ մի էական նշանակություն չտալով կատարվածին ու մոռանալով ամեն ինչ, մենք ուրախ քաղաք վերադարձանք: Եվ միայն հիմա եմ վախով զգում, որ իսկապես կարող էի և խեղդվել: Եվ հավանաբար ամեն անգամ այդ դեպքը հիշելիս, ես պետք է նորից ու նորից խեղդվեմ...

Այսքանը, ես էլ բան չունեմ քեզ ասելու: Ինձ զարմացնում է միայն դեպքերի այսպիսի արագ ընթացքը: Ուղղակի իմ մտքով չէր անցնում, թե ամեն ինչ այսպես արագ ու հեշտ պիտի վերջանար:

Հա, քիչ էր մնում մոռանալի: Այս փոքր լուսանկարը չորոնես: Այն մի քանի օր առաջ պատահաբար գտա քո անձնագրի մեջ: Սա միակ լուսանկարն է, որտեղ երկուսս էլ ուրախ ենք: Բայց, ճիշտն ասած, լուսանկարն ինձ չի հետաքրքրում: Նկարի հակառակ երեսին բանաստեղծական քառատող կա: Քո ձեռագրով է գրված: Երևի ինչ-որ տեղ կարդացել ես ու շատ է դուր եկել: Ահա, երևի վերջի՞ն տունն է:

Եթե ճիշտ է, որ քեզնից բացի ուրիշ սերեր ունեի այդ օրը,

Եթե ճիշտ է, որ մինչև վերջ պիտի սիրեմ նրանց –

Հավատա վերջապես, որ ճիշտ է նաև այս.

Չեմ կարող վերացնել մաշկիս միջից բարձրացող քո հոտը...

Անձնագիրդ չմոռանաս վերցնել: Աշխարհում դեռ շատ լավ բանաստեղծներ ու բանաստեղծություններ կան: Խնդրում եմ, չմոռանաս դուռը ծածկել, ես հարբուխ եմ: Իսկ մեր միջանցքում, գիտես, միշտ էլ քանի է լինում, և աչքերիս կարմրությունը միմիայն հարբուխից է: